

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԷՋԵՐ (ԺԴ—ԺԹ դդ.)

Անիի մերձակա Հոռոմոսի վանքը միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր հոգևոր ու մշակութային կենտրոններից է։ Հիմնադրվել է Ժ դարի 30—40-ական թվականներին Բյուզանդիայից (Հոռոմների երկրից) հայրենիք վերադարձած հայ հոգևորականների կողմից (այստեղից էլ՝ Հոռոմոս անունը)։ Առաջին վանահայրն էր Հովհաննես վարդապետը[1]։

Հոռոմոսի դերը մեծապես աճեց 961 թվականից հետո, երբ Աշոտ Գ Ողորմած (953—977) թագավորը Անին հռչակեց Բագրատունյաց պետության մայրաքաղաք, իսկ Հոռոմոսի վանքը դարձրեց թագավորական տոհմի հանգստարան (դամբարանատեղի)։ Այս ձեռնարկը քաղաքական գործիչը, որը երկրի ամրապնդման ուղղությամբ քիչ ջանք չգործադրեց, մահից հետո հողին հանձնվեց Հոռոմոսում, ուր մինչև մեր դարի սկզբները, պահպանվում էր նրա տապանաքարը։ ԺԱ դարի սկզբներին, Սարգիս Ա Սևանցի (992—1019) կաթողիկոսի աթոռակալության տարիներին, մայրաքաղաք Անի տեղափոխվեց նաև Հայոց Կաթողիկոսարանը։ Ուշագրավ է, որ մահից հետո, 1022 թ., բարեհամբավ Սարգիս կաթողիկոսը նույնպես Հոռոմոսում է թաղվել[2]։

Վանական համալիրը, որը սկզբնապես բաղկացած էր Ս. Ծողակաթ եկեղեցուց, միաբանների կացարանից ու հյուրատնից[3], հետագայում, հատկապես ԺԱ դարի առաջին կեսին, զգալիորեն ընդարձակվեց, կառուցապատվեց նոր, թագավորաշեն եկեղեցիներով, մատուռներով, նշխարատնե-

---

[1] **Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկ,** Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 174։

[2] Արիստակիսի Լաստիվերտցւոյ Պատմութիւն, Երևան, 1963, էջ 26։

[3] **Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկ,** Պատմութիւն..., էջ 176, 188։

րով ու այլ շինություններով։ Գագիկ Ա Բագրատունին (990—1020) կառուցեց Ս. Գևորգ եկեղեցին, նրա որդի Հովհաննես Սմբատը՝ (1020—1041) Ս. Հովհաննես եկեղեցին։ Բագրատունյաց անկումից, ապա 1064 թ. սելջուկների ավերիչ ներխուժումից հետո, Անիի նման Հոռոմոսի վանքը ևս ծանր վիճակում էր գտնվում։ Սակայն ԺԲ դարի վերջերից սկսած, և հատկապես հաջորդ հարյուրամյակի առաջին տասնամյակներին, Զաքարյանների շրջանում վանքը կրկին հոգևոր ու մշակութային առաջատար կենտրոնի դեր է ստանձնում։ Այստեղ գործում էր վանական դպրոց, գրչատուն, հարուստ գրապահոց։ Վանքի այս շրջանի տնտեսական զորության մասին են վկայում նվիրատվական բնույթի վիմագիր արձանագրությունները։

Ճիշտ է, ԺԳ դարում վանքի ծաղկումն ընդմիջարկվեց մոնղոլական ասպատակություններով, սակայն Հոռոմոսի բարգավաճումը կանգ չառավ։ 1229—1253 թվականներին հիշատակվող վանահոր՝ Ամիր Երկաթի որդի Բարսեղ արքեպիսկոպոսի ջանքերով (որը որոշ ժամանակ դարձավ նաև Անիի ու Ծիրակի արքեպիսկոպոսը) Հոռոմոսում նշանակալից շինարարական աշխատանքներ կատարվեցին, վանքը բազմաթիվ նվիրատվություններ ստացավ։ Աղբյուրագիտական նյութերից դատելով, մինչև ԺԴ դարի 40-ական թվականները կացությունը Հոռոմոսում հիմնականում կայուն էր։ Դրանից հետո, ըստ տարածված կարծիքի, վանքը լքվել է և, շուրջ 300 տարի ամայի մնալուց հետո, ԺԷ դարի վերջերին կրկին վերականգնվել։ Մեր որոնումները, սակայն, երևան բերեցին մի շարք ուշագրավ տեղեկություններ, որոնք թույլ են տալիս հիմնավորապես վերանայել այդ կարծիքը։

Հոռոմոսի վանքի պատմության և ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղվել են Ն. Սարգսյանը, Ա. Մխիթարյանցը, Ղ. Ալիշանը, Թ. Թորամանյանը, Ժ. Մ. Թիերին և ուրիշներ[4]։ Առաջին երկուսը, որ Հոռոմոս են այցելել 1850-ական թվականներին, նկարագրել են եկեղեցիներն ու մյուս կառույցները, արտագրել ու հրատարակել են տեղի բազմաթիվ վիմագիր արձանագրությունները։ Թ. Թորամանյանն անդրադարձել է ճարտարապետական խնդիրներին, պարզել համալիրի հնագույն կառույցի հարցը։ Ժ. Մ. Թիերին Հոռոմոս է այցելել արդեն մեր օրերում (1959, 1964, 1970 թթ.) և, տեղում ուսումնասիրելով հուշարձանները, ի մի է բերել նաև վանքի պատմության մասին եղած նյութերն ու հրապարակել առանձին գրքով։ Հոռոմոսին անդրադարձել են նաև շատ այլ ուսումնասիրողներ՝ հիմնականում ճարտարապետական հարցերի առնչությամբ։

Մեր նպատակն է լուսաբանել վանքի պատմության մի շրջանը, որը դուրս է մնացել նախորդ հետազոտողների ուշադրությունից։ Բանն այն է, որ Հոռոմոսի՝ Անիի հետ սերտորեն կապված լինելը (իսկ դա իրոք այդպես էր, քաղաքի արվարձանները հասնում էին մինչև վանք), ինչպես և ԺԴ դարի սկզբներից վիմագիր արձանագրությունների խիստ նվազումը, ուսումնասի-

---

[4] **Ն. Սարգսյան,** Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 145—168։ **Ա. Մխիթարեանց,** Պատմութիւն Հոռոմոսին վանաց ի Ծիրակ, Վաղարշապատ, 1870, 53 էջ, **Ղ. Ալիշան,** Ծիրակ, Վենետիկ, 1881, էջ 18—32, **Թ. Թորամանյան,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երևան, 1942, էջ 298—304, **J—M Thierry,** Le couvent Arménien d'Horomos, Louvain—Paris, 1980։ Հոռոմոսի մշակութային կյանքի մասին մի քանի հոդվածներ են հրատարակվել մեր կողմից՝ Գրիչ և մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցի, Բանբեր Երևանի համալսարանի, 1982, № 1, Հոռոմոսի գրչության կենտրոնի պատմությունից, «Էջմիածին», 1984, Ե, Կազմաբարությունը Հոռոմոսի գրչության կենտրոնում, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր, 1986, № 12։

րողներին ենթադրել են տվել, որ անեցիների արտագաղթով և քաղաքի ամայացմամբ Հոռոմոսը նույնպես՝ առնվազն նույն դարի կեսերին լքվել է: Ա. Մխիթարյանցը վանքի միջնադարյան վերջին վանահայր է համարում 1326 թ. մի արձանագրության մեջ հիշվող Վահանին[5]: Պատմաբան Լեոն տեղում արձանագրություններին ծանոթանալուց հետո գրում է. «Հոռոմոսի կյանքը ներկայացնող արձանագրությունները ընդհատվում են 1336 թվականին... **այնուհետև սև անհայտություն է գալիս հոչակավոր վանքի վրա,** որ շատ հասկանալի կլինի, եթե չմոռանանք, որ շրջականերն էլ քարուքանդ, ավերակ երկիր էին դարձել: **Երեք հարյուր հիսուն տարուց հետո մի արձանագրություն է երևում, որ կարող է այդ երկար ժամանակամիջոցի պատմությունը համարվել»**[6]: Իր կարծիքի ձևակերպման մեջ Թ. Թորամանյանն ավելի հեռատես է. «1336 թվականեն հետո **349 տարի վանքին վիճակը անստույգ** է, եթե բոլորովին ամայացած չէր, գոնե անտերունչ վիճակի մատնված էր մինչև 1685 թվականը, երբ Դանիել վարդապետ նորոգեր և վերստին շենցուցեր է»[7]: Համապատասխան վիմագրերի բացակայության պատճառով, նշված երեք ու կես դարը վանքի պատմության մեջ անհայտության ժամանակաշրջան է համարում նաև Ժ. Մ. Թիերին[8]:

Ինչպիսի՞ն էր Հոռոմոսի վիճակը ԺԴ դարում: Նախ նկատենք, որ այս շրջանի Անիի պատմությունը, ձեռագրերի հիշատակարանների ընձեռած տվյալների շնորհիվ արդեն միանշանակ կերպով չի բնութագրվում որպես անկման ու ամայացման հարյուրամյակ: Քաղաքում հարատևում էր մշակութային կյանքը և եթե այնտեղ նոր եկեղեցիներ չէին կառուցվում, ապա գրվում ու նորոգվում էին ձեռագիր մատյաններ: Այդպիսիներից մեկի ստեղծման ժամանակը 1379 թվականն է[9]: Իսկ Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկը քաղաքում ձեռագիր է ընդօրինակել անգամ ԺԵ դարի սկզբներին[10]:

Հոգևոր ու մշակութային կյանքը շարունակվում էր նաև Հոռոմոսում: Վերը հիշատակված՝ 1336 թ. արձանագրությունը հավաստում է վանքի կարգավորվող տնտեսական վիճակի մասին (Զաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահ Ա-ի թոռ Վահրամ աթաբեկը վերստին վավերացրել է իր նախնիների կողմից վանքին տրված նվիրատվությունները և ավելացրել նորերը): Արձանագրության վերջում հիշվում է Հոռոմոսի վանահայր Ստեփանոսը: Հոռոմոսում ԺԴ դարից պահպանված այս վերջին արձանագրությամբ, վանքին վերաբերող վիմագիր սկզբնաղբյուրներն իրենց տեղը զիջում են ձեռագրական նյութերին, որոնք և մեծապես հարստացնում, ամբողջացնում են վանքի պատմությունը:

---

[5] **Ա. Մխիթարյանց,** նշվ. աշխ., էջ 21:

[6] **Լեո,** Անի, Երևան, 1963, էջ 122 (այս և հաջորդ մեջբերումներում կատարված ընդգծումները մերն են՝ Կ. Մ.):

[7] **Թ. Թորամանյան,** նշվ. աշխ., էջ 302:

[8] **J.—M Thierry,** նշվ. աշխ., էջ 5:

[9] **Կ. Մաթևոսյան,** XIV դարի հիշատակարանները Անի քաղաքի և անեցիների մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1985, № 3, էջ 114:

[10] **Կ. Մաթևոսյան,** Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկ գրիչը, «Էջմիածին», 1985, Ը, էջ 41—43: ԺԴ—ԺԵ դդ. Անիում հատվել են մոնղոլական տերության դրամներ: Արժանահիշատակ է, որ այդ դրամների մեջ կան այնպիսիները, որոնց վրա պատկերված է խաչ և արաբերեն գրված է՝ «Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ՝ Աստծոյ միակ» բանաձևը: Տես՝ **Խ. Մուշեղյան,** Անի և Դվին քաղաքներում գտնված դրամները, Արևելյան աղբյուրագիտություն 1, Երևան, 1988, էջ 82:

1347 թ. ոմն Զաջն ու իր որդի Ամիր Սմբատը արծաթե դրվագազարդ կազմ են պատրաստել տալիս և դրանով կազմելով 1325 թ. Ջենովայում գրված մի Ավետարան՝ այն նվիրում են Հոռոմոսի վանքին: Ոսկերիչ Գրիգորի պատրաստած կազմի երկու կողմերում էլ դրվագագիր արձանագրություններ են պահպանվել, ուր բացի նշված անձանցից հիշվում են նաև Հոռոմոսի վանահայր Ստեփանոսը, Սարգիս կրոնավորը և ուրիշներ[11]: Այս արծաթյա կազմին հանգամանորեն անդրադարձած Տ. Իզմայլովան գտնում է, որ այն պատրաստվել է «Հոռոմոսի վանքի շրջանում», միաժամանակ բարձր գնահատելով նրա պատրաստման եղանակը և ինքնատիպ ոճը[12]:

Այսպիսով 1336 թ. արձանագրությունը և 1347 թ. թանկագին կազմով ձեռագրի՝ վանքին նվիրաբերման փաստը, ինչպես և այս շրջանի Անիի կացության մասին եղած տեղեկությունները թույլ են տալիս ԺԴ դարի կեսերը Հոռոմոսի վանքի գոյության անխոով ժամանակաշրջան համարել:

Սակայն դրանից որոշ ժամանակ անց Անին ու շրջակայքը ենթարկվել են նոր փորձությունների: Աղբյուրներում պահպանված կցկտուր տեղեկությունները վկայում են 1357, ապա 1398 թ. ավերածությունների ու կողոպուտի մասին[13], իսկ 1364-ին Երևանում ապաստանած մի անեցի տեղի Կաթողիկե եկեղեցու պատին մի ողբաձայն արձանագրություն է թողել՝ «Աստուած զԱնու ամիրողն ամիրէ»[14]: Ըստ ամենայնի ԺԵ դարի առաջին տասնամյակներին Անին վերջնականապես դատարկվել է քաղաքային բնակչությունից: Սակայն Հոռոմոսի վանքը շարունակել է գործել: Այդ մասին է վկայում 1459 թ. Այրիվանքում Մատթեոս գրչի գրած և Ստեփանոս նկարչի պատկերազարդած ճաշոցը (Մատենադարան, № 6272), որը հավանորեն հենց նույն թվականին է Հոռոմոսի վանքին նվիրել ստացող Աստվածատուր եպիսկոպոսը: Հիշատակարանում այդ մասին կարդում ենք. «Արդ, ես Աստուածատուր եպիսկոպոս շնորհեցի զսուրբ գիրքս Հոռոմոսի վանից դրանն, Սրբոյ Յովանիսի և Սուրբ Աստուածածնին դրանցն, յիշատակ ինձ և ծնողացն իմոց... և մի իշխեսցե հեռացուցանել ի դրանէ սուրբ ուխտին, գողանալով կամ ծախելով կամ գրաւելով...»[15]: Ձեռագիրը քառորդ դար Հոռոմոսում է մնացել: Այդ է փաստում նույն մատյանի մեկ այլ հիշատակարան՝ գրված Հոռոմոս այցելած Սարգիս Գ (1484—1515) կաթողիկոսի կողմից 1485 թվականին. «Ես՝ Սարգիս կաթողիկոս և Գրիգոր վարդապետ տեսաք զՏարեգիրքս, որ Աստուածատուր եպիսկոպոսն գրել է տվել և յիշատակ գրել է ի Հոռոմոսի վանքս և անիծաւք փակել, որ ի Սուրբ Յովանիսի դուռս կենա: Մեք այլ կրկին հաստատեցաք զՏարեգիրքս ի Հոռոմոսի վանքս, ի դուռս Սուրբ Յովանիսիս, ի յառաջնորդութիւն վանիցս Գրիգոր եպիսկոպոսի... ի թվ. ՉԼԴ (1485)...»[16]: Սարգիս Գ կաթողիկոսը Հոռոմոսում է եղել

---

[11] Կազմարարությունը Հոռոմոսի գրչության կենտրոնում, էջ 64—68: Ձեռագիրն այժմ պահվում է Սանկտ Պետերբուրգում, Էրմիտաժ՝ 93—834:

[12] **Т. Измайлова**, Армянская рукопись написанная в Генуе в 1325 г. и ее серебряный оклад 1347 г. «Византийский временник», том XX, с. 258.

[13] **Կ. Մաթևոսյան**, XIV դարի հիշատակարանները..., էջ 109—113:

[14] **Կ. Ղաֆադարյան**, Երևան, միջնադարյան արձանագրությունները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 141:

[15] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմ. Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 122:

[16] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմ. Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 70:

իր աթոռակալության երկրորդ տարում (հավանաբար Անի այցելելու ճանապարհին): Վանքի պատմության համար կարևոր փաստ է Գրիգոր եպիսկոպոսի՝ Հոռոմոսի առաջնորդ լինելու մասին հիշատակությունը:

Ինչպես տեսնում ենք, Հոռոմոսը գործող վանք է եղել ընդհուպ մինչև ԺԵ դարի վերջերը: Սակայն դրանով հիշատակարանների արժեքավոր տեղեկությունները չեն ավարտվում: Պարզվում է, որ Հոռոմոսում ձեռագիր է գրվել նաև 1585 թ.: Դա Ավետարան է, որն այժմ պահվում է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում (№ 59): Գրիչն ու ստացողն է Հոռոմոսի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը, որը ձեռագրի 4ա էջում գրում է. «Նկարեցաւ սուրբ առաքելագործ Աւետարանս ձեռամբ Յոհանէս եպիսկոպոսի Հոռոմոսի վանաց...»[17]: Հիշատակարանում նշում է իր ուսուցչին՝ նույնպես Հովհաննես անունով եպիսկոպոսին՝ «դարձեալ յիշեցէք հեզայհոգի աշխատասէր եւ իմաստուն իմ վարպետ տէր Յովանէս եպիսկոպոս»[18]: Հոռոմոսի վանահայրը մեծ ազգատոհմի զավակ է եղել, քանզի հիշատակարանում թվարկելով իր հարազատներին (ծնողներ, եղբայրներ, քույրեր, եղբորորդիներ և այլք)՝ նշում է 34 հոգու անուն: Հիշատակագիրը միաժամանակ պատմում է ժամանակի ծանր կացության մասին, երբ ինքը հալածվելով ստիպված է եղել յոթ տարի ապաստանել Բասենում, որից հետո նոր միայն վերադառնալ: Ձեռագրի 187բ էջում գրաստեր հոռոմոսցին ցավով գրում է.

«Ի դառնութեան ժամանակի
Չկայ պատիւ գրոց կարդացողին,
Սէրն ցամաքել էր աշխարհին,
Չկար հետեւող գրոց բանին»:

Թերևս նաև այս էր պատճառը, որ Հովհաննեսն ինքն է Ավետարանի գրչության գործ ձեռնարկել: Ուշագրավ է, որ նրա ազգականների թվում եղել են այլ հոգևորականներ: Եղբոր որդին, կրկին Հովհաննես անունով, վարդապետ էր («աշակերտնեցաւ, վարդապետ եղաւ»), մեկ ուրիշը՝ ւարկավագ («սարկայվաք Մաթոս»): Թերևս նրանք անմիջական առնչություն են ունեցել իրենց ազգակցի տնօրինած Հոռոմոսի վանքի հետ:

Սակայն անկախ ամեն ինչից, կարևորն այն է, որ Սարգիս կաթողիկոսի հիշատակարանի գրությունից ուղիղ մեկ դար անց՝ 1585-ին, Հովհաննեսը հիշվում է որպես «եպիսկոպոս Հոռոմոսի վանաց» և ոչ միայն պարզապես հիշվում, այլև հենց ինքն է հնամյա վանքում ձեռագիր ընդօրինակում՝ ասես փորձելով վառ պահել երբեմնի հռչակավոր գրչության կենտրոնի մշակութային ավանդները:

Վանքը գործել է նաև հաջորդ՝ ԺԷ դարի կեսերին: Ըստ Ղ. Ալիշանի «ի կէս ԺԷ դարու (1653)» մի հիշատակարանում նշվում է Հոռոմոսի առաջնորդ մեկ այլ Հովհաննեսի անուն, որը նաև իրեն հորջորջել է «եպիսկոպոս վիճակին Անոյ»[19]:

---

[17] **Ս. Տեր-Ավետիսյան,** ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի հ. Ա, Վիեննա, 1970, էջ 134: Գրիչը «նկարեցաւ» բառը օգտագործում է որպես «գրեցաւ»-ի համարժեք, այսինքն՝ «ստեղծվեց»:

[18] Նույն տեղում:

[19] **Ղ. Ալիշան,** Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 96: Ցավոք հեղինակն իր օգտագործած սկզբնաղբյուրը ճշգրտորեն չի նշում, միայն հայտնում է, որ մի ձեռագրի հիշատակարանից է տեղեկությունը քաղել:

Այսպիսով, վերը բերված վկայությունները գրեթե ամբողջովին լցնում են Հոռոմոսի վանքի պատմության երեք ու կես դարյա կարծեցյալ «անհայտության» շրջանը՝ հաստատելով, որ այդ ամբողջ ժամանակահատվածում վանքը թեև գտնվել է դժվարին պայմաններում, բայց հարատևել է, ունեցել բարձրաստիճան առաջնորդներ, հետևաբար նաև միաբանություն:

Սակայն վանքն այնուամենայնիվ մի կարճ ժամանակահատված լքվել է, հավանաբար հիշված վերջին Հովհաննեսից հետո, 1660—70-ական թվականներին: 20—30 տարվա ամայությունն էլ բավական էր (եթե նաև նկատի ունենանք նախընթաց շրջանի դժվարությունները), որպեսզի 1685 թ. Հոռոմոս եկած և վանքի վերականգնման գործը ձեռնարկած Դանիել վարդապետը ցավով արձանագրեր տեղի վաղուց ի վեր «աւերեալ» լինելը: Դանիել Տիգրանակերտցու թողած արժեքավոր արձանագրության մեջ մասնավորապես ասվում է. «Ի ՌՃԼԴ (1685) **թուաբերութեան հայոց նորոգեալ պայծառացաւ թագաւորաշէն մեծապանչ Հոռոմոսին վանքս ձեռամբ Դանիէլ Տիգրանակերտցւոյ... զի ունէր ժամանակս ոչ սակաւ աւերեալ, ալբով եւ հողով** լցեալ, զոր տեսեալ վերոգրեալ Դանիէլ վարդապետին, եռաց ի հոգի իւր և էարկ զանձն ի չարչարանս, ի դառն ժամանակիս, յորում ազգս Հայոց յոյժ էին չքաւորեալք, և իշխանութեամբ և ջանիւ լուսաւորեալ մաքրեաց զվանքս Սուրբ Յովհաննիսի ի տղմուտ և ի զազիր մթազգածութենէն վասն յուսոյն որ առ Աստուած»[20]: Ժամանակներն իրոք դժվարին էին, բայց Դանիել Տիգրանակերտցու ազգօգուտ աշխատանքով նորոգված վանքում կրկին վերահաստատվեց հոգևոր կյանքը, որն այնուհետև առանց ընդհատվելու շարունակվեց շուրջ երկուս ու կես հարյուրամյակ:

Մեր օրերն է հասել ԺԷ դարի ավարտին՝ 1699 թ. Ամիթեցի Դահմազի կողմից Հոռոմոսի վանքին նվիրաբերված թավշյա ասեղնագործ մի վարագույր (պահվում է Հայաստանի Ազգային պատկերասրահում, Արևելք-255 1010): Բուն վարագույրի վերին մասում ավելացված կարմիր կտորի վրա, երկու տողով ասեղնագործված է հետևյալ հիշատակագրությունը. «Յ(Ի) Շ(ԱՏԱ)Կ Է Վ(Ա)ՐԱԳՈՒՐՍ ՀԱՄԹԵՑԻ ՄՂՏՍԻ ԴԱՀՄԱԶԻՆ Ի Դ(ՈՒ)ՌՆ ՍԲ ՅՈՎԱՆՆ, ԹՎԻՆ ՈՃԽԸ (1699) // Ի ՎԱՆՔՆ ՀՈՌՈՄՈՍԻ Ս(Ր)Բ(Ո)-ՅՆ ՄԿՐՏՉԻ»[21]:

Վարագույրի նորահայտ ընծայագիրը կարևոր լրացում է անում Հոռոմոսի այս շրջանի պատմությանը՝ հավաստելով, որ Դանիել վարդապետի ձեռնարկը սոսկ վերաշինման գործերով չի ավարտվել, և որ նորոգված վանքը դեպի իրեն է ձգել անգամ Հայաստանի հեռավոր վայրերից եկած ուխտավորների:

1714 թ. Կարսում գրված մի հիշատակարանում Երեմիա գրիչը նշում է Հոռոմոսի նոր վանահայր Խաչատուր վարդապետին, որը մի ժամանակ եղել է նաև Կարսի Ս. Աստվածածնի առաջնորդը՝ «... առաջնորդութեան սուրբ վանացն Յովհաննու, որ այժմ ասի Ղօշավանք, Խաչատուր վարդապետի...»[22]: Այս հիշատակության մեջ առաջին անգամ վանքի հնավանդ Հոռոմոս անվանը զուգահեռ հանդիպում է Ղոշավանք (այլուր նաև Խոշավանք) օտարա-

---

[20] **Ա. Մխիթարյանց**, նշվ. աշխ., էջ 42:

[21] Հրատարակվում է առաջին անգամ: Վարագույրի մասին մեզ տեղեկացրել է պատկերասրահի գիտաշխատող Լ. Եսայանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը— Կ. Մ.:

[22] Մատենադարան, № 4608, էջ 114—115, հմմտ. **Վ. Հակոբյան**, Կանոնագիրք Հայոց հ. Բ, Երևան, 1971, էջ 365:

հունչ անվանումը, որն առաջացել է Հոռոմոս—Անի ճանապարհին կառուցված զույգ աշտարակավոր կամարի՝ Ղոշերի (թուրքերեն՝ զույգ) անունից[23]: Վանքն այդպես է կոչում նաև Սահակ Էրզրումցին՝ 1705 թվականից առաջ գրած մի չափածո ստեղծագործության մեջ. «Տաղ Ղօշավանից սրբոյն Յոհաննու ասացեալ ի Սահակէն...»: Ինչպես երևում է վերջին քառատողից, տաղը հենց Հոռոմոսում է գրվել.

Ի հռչակաւոր սուրբ ուխտին
Հոռոմոսի Ղօշավանիցս
Սահակ դպիրս ասօղ բանիս
Շնորհատու Սուրբ Յոհաննէս[24]:

ԺԸ դարի կեսերին Հոռոմոսում հիշվում են երկու վանահայրեր: 1751 թ. հատվածաբար պահպանված մի արձանագրության մեջ նշվում է Ավետիք եպիսկոպոսը[25], իսկ այլ աղբյուրներում՝ 1751—55 թթ.՝ Եղիա վարդապետ Աշակերտցին[26]: Այս շրջանում աստիճանաբար վերականգնվում են վանքի մշակութային ավանդները: 1782 թ. Ակնագյուղեցի Գրիգոր աբեղան Հոռոմոսում ընդօրինակում է Առաքել Սյունեցու «Մեկնութիւն սահմանաց Դաւթի» գործը (Երուսաղեմ, № 2023)[27]:

Արձանագրություններից մեկի համաձայն, 1788 թ. Հովհաննես Շամբեցի վարդապետը նորոգել է Ս. Հովհաննես եկեղեցու զանգակատունը, վանքի պարիսպը և այլն[28]: 1784 թ. գրիչ Մանուելը Կարսում ընդօրինակած Վարդան Արևելցու «Աշխարհացույցի» բնագրում հետևյալ հավելումն է արել. «... Զորոյ գետն յԱնու, որ ասեն Արփաչայի, անդ է Ղօշավանքն Սուրբ Յովանէս և Սուրբ Գէորգ զարմանաշէն և հռչակաւոր աթոռ և կան բազում եկեղեցիք, Խ(40) խորան է, Խ(40) պատարագ կու լինի աւուրն»[29]: Ինչ խուք, մեկ օրում մատուցվող 40 պատարագների հիշատակումը Հոռոմոսի մասին եղած ավանդական պատումի մի վերապրուկ պետք է համարել, սակայն կաս-

---

[23] **Կ. Մաթևոսյան,** Հոռոմոս—Անի ճանապարհին գտնվող կամարը, Պատմա-բանասիրական հանդես, 1982, № 1, էջ 143—149: Ղոշավանքի և Թիֆլիսի Փաշա վանքի անունների միջև փորձել է զուգահեռ գտնել Լ. Մելիքսեթ Բեկը, այն կապելով ԺԴ դարի կեսերի Անիի գաղթականության հետ: Պ. Մուրադյանն այս ենթադրությունը համարում է «տարակուսելի» և ի վերջո իրավացիորեն մերժում (**П. Мурадян,** Армянская эпиграфика Грузии, Тбилиси, Ереван, 1988, с. 50—52). Մեր կողմից ավելացնենք, որ Ղոշավանք անունը ԺԴ դարի Անիում ընդհանրապես չէր կարող գոյություն ունենալ: Հոռոմոսն այս անվամբ հիշվում է դրանից առնվազն երեք ու կես հարյուրամյակ հետո:

[24] **Հ. Տաշյան,** Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 863:

[25] **J—M Thierry,** նշվ. աշխ., էջ 85:

[26] **Ս. Էփրիկյան,** Բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 224—225:

[27] Հիշատակարանում գրիչը հայտնում է. «...գրեցաւ... ի գերաւաքանչ վանքն Հոռոմոսի, որ և ի թագաւորէն Աշօտայ կերտեալ, եւ անուն սրբոյ Կարապետին է կառուցեալ, որ եւ այժմ իսկ անուանի Ղոշավանք, որ եւ անդ բազում աշխատանօք եւ նեղութեամբ ծրեցի ձեռամբ իմով Ակնա գյուղեցի Գրիգոր մեղապից տառապեալ աբեղայն, ի վայելումն անձին իմոյ»: **Ն. Պողարյան,** Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Է, Երուսաղեմ, 1974, էջ 55:

[28] **Ա. Մխիթարյանց,** նշվ. աշխ., էջ 49:

[29] Մատենադարան, № 8100, էջ 254բ, **Փ. Փ. Անթափյան,** Վարդան Արևելցի, գիրք Ա, Երևան, 1987, էջ 108:

կածից վեր է, որ ԺԸ դարի վերջերին վանքը, ժամանակի պայմանների ներածի չափով, բավական բարվոք կացության մեջ էր: Նման գոյավիճակը շարունակվեց նաև հաջորդ դարում: Ուշագրավ է, որ 1804—07 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին, Հոռոմոսում են ապաստանել Էջմիածնի վանքի միաբանները[30]:

ԺԹ դարում Հոռոմոսի վանքը ենթարկվել է Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանին, ընդգրկվել Կարսի թեմի կազմում: Աղբյուրներում հիշվում են Հոռոմոսի վանահայրեր Ստեփանոս եպիսկոպոս Զալախյանը (1825)[31], Պետրոս վարդապետը (1851)[32], նորոգման աշխատանքներ կատարած վանահայր Գրիգորը (1868—71)[33]: 1851 թ. վանքում շինարարություն է արել նաև Վարդան վարդապետը[34]: 1824 թ. վանքի ստացած նվիրատվություններից մեկը՝ եկեղեցական մի ծածկոց, այժմ պահվում է Հայաստանի պատմության թանգարանում (№ 1746): Ընդհանրապես այս շրջանում Անիի ավերակներն այցելած բազմաթիվ ճանապարհորդներ ու գիտնականներ հյուրընկալվել են Հոռոմոսում, քանի որ այն քաղաքին ամենից մոտ գտնվող բնակավայրն էր: Վանքին կից գոյացել էր մի քանի տներից կազմված փոքրիկ գյուղ: 1817 թ. վանքում մի գիշեր օթևանած անգլիացի արվեստագետ Ռոբերտ Կեր Փորտրը իր հուշագրության մեջ ջերմորեն է խոսում Հոռոմոսի հյուրընկալ վանականների մասին[35]: Տեղին է հիշել, որ դրանից շուրջ հազար տարի առաջ Հոռոմոսի վանքը հիմնադրած Հովհաննես վարդապետն ինքը մեծ տեղ է հատկացրել վանական անշահախնդիր հյուրընկալությանը՝ «յորժամ աղքատաց հանդիպեր և անցաւորաց և ճանապարհորդաց, հանգստարան պատրաստեր զտեղին՝ մինչև հանգչել իբր յիրեանց տան ամենայն օտարաց»[36]: Ցավոք նման փառավոր անցյալ, բարի ավանդներ ու երկարաձիգ պատմություն ունեցող Հոռոմոսի վանքն այնուամենայնիվ լքվել է միաբանությունից և ոչ թե «խավար միջնադարում», այլ մեր «լուսավոր դարի» սկզբներին, հայակործան Առաջին աշխարհամարտի տարիներին: Վանքի այս նոր ամայացման վերջին իրեղեն վկաներից է ԺԵ դարի մի ձեռագիր, որն այդ տարիներին դուրս է բերվել Հոռոմոսից և այժմ պահվում է Մատենադարանում (№ 7281):

Այսպիսով, Հոռոմոսի պատմության ԺԴ—ԺԹ դարերին վերաբերող նյութերը ցույց են տալիս, որ Բագրատունյաց Հայաստանի հոչակավոր վանքը, չնայած Անի—Ծիրակի շրջանը պարբերաբար ամայացնող աղետներին, շատ կենսունակ է եղել և փաստորեն առանց երկարատև ընդմիջումների գործել է ողջ միջնադարի ընթացքում: Այն Հայոց երբեմնի շքեղաշեն մայրաքաղաքի հոգևոր ու մշակութային ավանդների պահպանման կարևոր կենտրոններից մեկն էր:

...Այժմ Հոռոմոսի կիսավեր եկեղեցիներն ու թանկագին հիշատակները մնացել են սահմանային դարձած Ախուրյան գետի այն ափին, սակայն դարերի հեռվից իրապես մեզ է հասցեագրված վանքի պատմական ու մշակութային հսկայական ժառանգությունը, որի հետագա ուսումնասիրությունը կարևոր ու այժմեական է:

---

30 **Ա. Մխիթարյանց,** նշվ. աշխ., էջ 18—19:

31 **Ս. Էփրիկյան,** նշվ. աշխ., էջ 225:

32 **Ա. Մխիթարյան,** նշվ. աշխ., էջ 53:

33 **Ս. Էփրիկյան,** նշվ. աշխ., էջ 224:

34 Նույն տեղում:

35 **Հ. Հակոբյան,** Ուղեգրություններ, Հ. Զ. Երևան, 1934, էջ 748—750;

36 **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ,** էջ 174;